ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ՝ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1988-1991ԹԹ.)*

Աննա Մկրտիչյան

Բանալի բառեր՝ հայաստանյան մամուլ, իրավական պայքար, Ղարաբաղյան շարժում, հայ-ադրբեջանական հակամարտություն, տեղեկատվություն:

1988-1991թթ., հասարակական-քաղաքական կյանքում արձանագրվող տեղաշարժերով պայմանավորված, լրատվական դաշտի ընդհանուր պատկերը շեշտակիորեն փոխվեց: Այն դեռևս կրում էր խորհրդային գաղափարախոսության կնիքը, բայց ազատականացման քայլերն էլ բավականին ակտիվ էին և ընդգծված բնույթ ունեին: Այդ շրջանի հայաստանյան մամուլը հասկանալիորեն ուղղված էր ղարաբաղյան շարժմանը՝ իր բոլոր դրսևորումներով: Ցանկացած ոլորտի առնչվող հրապարակում տարբեր թելերով կապվում էր Ղարաբաղին՝ սկսած Ղարաբաղի խնդիրը վերակառուցման քողի ներքո և հրապարակայնության ոգով ներկայացնելուց մինչև «ազգայինի» վերահմաստավորում, և, իհարկե, իրավական պայքար, որն արտահայտվում էր հանրաքվեի և ընտրությունների անցկացմամբ, անկախության ճանապարհի հարթեցմամբ, Ղարաբաղի կայացման գործընթացի իրականացմամբ և այլն:

Եթե սկզբնական շրջանում Ղարաբաղյան հիմնախնդիրը ներկայացվում էր բացառապես վերակառուցման քողի ներքո, ինչը դրսևորվում էր թե՛ քաղաքական հարթակներում, թե՛ լրահոսում, ապա Ղարաբաղյան շարժման մեկնարկին հաջորդող իրադարձությունները պահանջատեր հայության համար պայքարի նոր ուղղություններ էին ուրվագծում:

Եվ պատահական չէր, որ դեպքերի աննախադեպ սրընթաց զարգացումները հարստացնում էին մամուլի բովանդակությունը: Հանրահավաքներն ու գործադուլներն ապարդյուն էին, կրակոցները հաճախակիանում էին, կորուստները՝ ավելանում, զոհերի թիվը՝ աճում: Հետևաբար հրապարակ դուրս եկած հայը փոխեց պայքարի ուղղությունը՝ փորձելով խնդրի լուծմանը հասնել իրավական ճանապարհով: Արցախում կազմակերպվեց հանրաքվե, անցկացվեցին ընտրություններ, մարզը հռչակվեց հանրապետություն, ու մեկնարկեց անկախության երթը:

Իրավական պայքարն ընթանում էր միտինգներին, գործադուլներին ու դասադուլներին զուգահեռ, և այդ մասին տարբեր ամբիոններից բարձրաձայնում էին պաշտոնյաները: Իրավական պայքարի ուղին էլ դյուրին չէր, ինչի մասին հաճախ խոստովանում էր մամուլը. «Մինչև 88-ի փետրվարյան դեպքերը Ղարաբաղի մասին խոսում էինք շշուկով, մեկուսի, հետո այդ շարժմանը հասցեագրվեց պաշտոնական զրպարտությունը՝ ծայրահեղականություն, ազգայնամոլություն և այլն: Իսկ այսօր հարցի լուծումը դրված է պետական հիմքերի վրա, որը սակայն աղետալիորեն ձգձգվում է»[1]: Ըստ Ս. Հարությունյանի՝ «Հենց մարզի բնակչությունն ինքը հանրաքվեի միջոցով, կամքի ազատ արտահայտմամբ պետք է վճռի իր բախտը»[2], քանի որ «վիատված չէ արցախ-

---

* Հոդվածն ընդունվել է 17.03.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.թ., դոցենտ Վ. Պետրոսյանը: 28.03.20:

ցին, վստահ է իր պահանջի արդարացիությանը և իրեն բնորոշ համառությամբ սպասում է դրա իրականացմանը: Այդ պահանջը երազանք է նրա համար, որ տասնամյակներ շարունակ բանտված՝ չի խամրել բնավ… ու այսօր հանկարծ ճիչ է դարձել»[3]:

Այս ժամանակաշրջանում Ղարաբաղ էին գալիս տարբեր պատվիրակություններ: Հարցին իրավական լուծում գտնելու նպատակով Ստեփանակերտ ժամանեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովի անդամները, ովքեր հանդիպումների ընթացքում լսեցին Լեռնային Ղարաբաղի խնդրի ակունքների, 1988թ. փետրվարի 20-ին ընդունված որոշման մասին[4]: Արցախցիները վերահաստատեցին իրենց ցանկությունը, այն է՝ «պրոբլեմի միակ ճիշտ լուծումը ինքնավար մարզի վերամիավորումն է Հայկական ԽՍՀ-ի հետ»[5]: Հանձնաժողովի անդամների մեկշաբաթյա այցը ԼՂԻՄ աչքի ընկավ բազմաթիվ հանդիպումներով ու զրույցներով, իսկ հանձնաժողովի ընդհանրացված նյութերը և առաջարկությունները նախատեսվում էր ներկայացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի քննարկմանը[6]:

Որպես կանոն՝ ղարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ ընդգծված սրտացավությամբ աչքի էին ընկնում «Ավանգարդ»-ի այն համարները, որոնք ստորագրում էր թերթի խմբագրի տեղակալը՝ Այդին Մորիկյանը: Այս և հաջորդող համարներում ղարաբաղյան շարժումն առանցքային թեմա էր «Ավանգարդ»-ի համար, իսկ նման հրապարակումներն առանձնանում էին համարձակությամբ, սրությամբ[7]:

ԽՍՀՄ-ում ազգային հարցի արմատական լուծման ուղիների մասին մտորելիս հետևողականորեն սկսեց ընդգծվել այն գաղափարը, որ «Խորհրդային Միության հանրապետությունների, ազգային-տերիտորիալ կազմավորումների միջև վիճելի հարցերը պետք է կարգավորվեն ոչ թե փոխզիջման, այլ արդարության սկզբունքով, դրանց արմատական լուծման ճանապարհով»[8]: Հետևաբար, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը դիմեց ԽՍՀՄ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների նախագահություններին՝ պահանջելով «վերացնել ԼՂԻՄ շրջափակումը և ապահովել Ադրբեջանում հայ բնակչության անվտանգությունը»[9]: Հայկական կողմի պահանջները դարձյալ անարձագանք մնացին:

Ինչպես Հայկական ԽՍՀ 11-րդ Գումարման Գերագույն խորհրդի 10-րդ արտահերթ նստաշրջանի ընթացքում հնչած Ս. Հարությունյանի ելույթում, այնպես էլ մամուլում առանցքային էր «Ղարաբաղի խնդիրն ու հարցը հրատապ լուծելու անհրաժեշտությունը»[10]: ԽՄԿԿ Կենտկոմի 1989թ. սեպտեմբերյան պլենումում Հարությունյանը նշեց, որ «արդեն 2-րդ տարին է՝ մամուլը և հեռուստատեսությունը մեր ռեգիոնն անվանում են ոչ այլ կերպ, քան թեժ և պայթյունավտանգ»[11], «պայթուցիչ դարձան նախ և առաջ ազգային հարցի աղաղակող ձևախեղումները, որոնք մերկացվեցին հրապարակայնությամբ և վերակառուցմամբ»12]:

Ոչ թե զենքի ուժով, այլ օրենքի շրջանակում խնդրի լուծմանը սպասողներն ու հավատացողները շատ էին, թեպետ ժամանակ առ ժամանակ կրակոցներ էին լսվում:

Այս շրջանում իրավական առումով կարևոր քայլ էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 1-ի համատեղ նիստում ընդունված որոշումը, ըստ որի՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորվում էր Հայկական ԽՍՀ-ին [13]: Որոշումն ընդունվեց՝ հենվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, իսկ մամուլն ուրախությամբ արձանագրեց, որ «Արցախը ողջունում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին որոշումը»[14] և «ի լուր աշխարհի հայտարարեց, որ այսուհետ Արցախն ու Հայաստանը միասին կլինեն»[15]:

Ի տարբերություն 1988-ի, արդեն 1989 թվականն ամփոփելիս մամուլը համարձակ հայտարարեց, որ «վերջին երկու տարում մենք իմաստնացանք հարյուր տարով»[16]՝ նկատի ունենալով, որ «Մենք արթնացրինք աշխարհը, Մենք առաջինը ե-

ղանք պայքարի ճամփին, Մենք ցույց տվինք հաղթանակի ուղին, Մենք կհաղթենք»[17]:

Ռիգայում Բալթյան խորհրդի միջնորդությամբ սկսվեցին քաղաքական խորհրդատվություններ՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատի և Հայոց համազգային շարժման միջև[18]: Իրավական հարթությունում պայքարը չէր դադարում. ԽՍՀՄ ժողովրդական մի խումբ դեպուտատներ դիմեցին ԽՍՀՄ դեպուտատների միջբեգիոնալ խմբին[19]. «...Հիմա դեպքերը զարգանում են վայրկյաններով», և հարկ է հաշվի առնել «Փորձության օրերի խորհուրդը»[20]:

Իրադրությունը սրվում էր, ուստի մամուլն ուշադրության դիտակետում էր պահում զարգացող իրադարձություններն ու ձգտում հետևողականորեն արձագանքել դրանց: Թեև թերթերում դեռևս շատ չէին վերլուծություններն ու մեկնաբանությունները, սակայն ղարաբաղյան շարժման երկրորդ տարին ամփոփելիս մամուլը փորձեց ընդհանուր գծերով ներկայացնել շարժման պատմությունը, ներկան, նաև ուրվագծել անելիքները[21]՝ միաժամանակ զուգահեռներ անցկացնելով 1988թ. և 1990թ. նույն ժամանակահատվածի միջև[22]: Գրելով Հայաստանի անկախության ու արցախյան շարժման մասին՝ մամուլը նշում էր. «… Ցայսօր մամուլում հանգամանալից վերլուծություններ չեն արվել Անկախության և Վերամիավորման գաղափարական զուգակցման առնչությամբ … »[23]:

1990 թ. մայիսից սկսվեց հայ-ադրբեջանական հակամարտության ամենածանր, արյունոտ ժամանակաշրջանը. օր օրի ավելացող հասարակական-քաղաքական կազմակերպությունները նախապատրաստվում էին Գերագույն խորհրդի ընտրություններին: Ի դեպ, նախկին քաղբանտարկյալներն առաջին անգամ հնարավորություն ստացան իրենց թեկնածություններն առաջադրելու խորհրդարանական ընտրություններում, շատերը դարձան Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներ, ոմանք (Ա. Նավասարդյան, Ա. Արշակյան) հիմնադրեցին ու ղեկավարեցին քաղաքական կուսակցություններ: Նման ազատությունը գորբաչովյան վերակառուցման և ժողովրդավարացման առարկայական դրսևորումն էր, ուստի պատահական չէր խորհրդարանական գալիք ընտրությունների հանդեպ հասարակության հետաքրքրությունը, ինչը, անշուշտ, իր դրսևորումը գտավ նաև մամուլում: Իրերն իրենց անուններով կոչելու ձգտումն ավելի ակնհայտ դարձավ, և սկսեցին բացահայտ քննադատություններ հնչել կենտրոնական մամուլի դեմ՝ հրապարակումներով ու ծաղրանկարներով[24]. «Մեր գործն է տպել, վերադասինը՝ խփել»[25]:

Այս շրջանում մամուլի ուշադրությունը փոքր-ինչ կիսվեց՝ ղարաբաղյան խնդրին ավելացավ Հայաստանի Գերագույն խորհրդի աշխատանքների լուսաբանման հարցը[26]: Մի կողմից Հայաստանը բռնել էր անկախացման ճանապարհը, նախապատրաստվում էր սեպտեմբերի 21-ի հանրահավաքին, մյուս կողմից՝ ԼՂ-ում հայ ժողովրդի պայքարը ստանում էր «ազգային-ազատագրական» անունը: Մամուլում տպագրվեց հարցազրույցների շարք Արցախի հետագա ճակատագրի, հայության պայքարի վերաբերյալ, քանի որ «Չհայտարարված պատերազմը շարունակվում էր»[27]:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ)[28] ստեղծումով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց նոր փուլ: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ ստեղծումն ամենավճռորոշ և գործնական քայլն էր: Դրան հաջորդեցին իրավական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ինքնահաստատման գործողությունները[29]: ԼՂՀ հռչակումը չէր կարող անտարբեր թողնել ռազմատենչ Բաքվին և նրա գլխավոր հովանավոր Թուրքիային: Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահության՝ 1991թ. սեպտեմբերի 3-ի որոշումով արցախցիների այդ քայլը որակվեց որպես դավաճանություն «Ադրբեջանի ամբողջականության և անկախության դեմ»[30]: Ի պատասխան արցախցիների դրսևորած աննկուն կամքի՝ ազերիները զանգվածային հարձակումներ իրականացրին Արցախ-Շահումյանի, Հայաստանի սահմանամերձ շրջանների վրա: 1991 թ. սեպտեմբերին այն

համոզմունքը կար (նման տրամադրություն կար նաև մամուլում), որ մոտ է դարաբաղյան հիմնախնդրի լուծումը: Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում սեպտեմբերի 9-ին հայտարարվեց, որ շուտով կվերականգնվեն մարզային իշխանությունները, մարզի տարածքից դուրս կբերվի ադրբեջանական օմոնը, և բանակցություններ կսկսվեն Հայաստանի ու Ադբեջանի միջև[31]: Ստեղծված նոր պայմաններում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի լուծման միջնորդի ու երաշխավորի դերը ստանձնեցին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բորիս Ելցինն ու Նուրսուլթան Նազարբաևը: Նրանք, ժամանելով Անդրկովկաս, սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտում բանակցություններ վարեցին ԼՂԻՄ ղեկավարության հետ, իսկ հաջորդ օրը Ժելեզնովոդսկում ընդունվեց հայտարարություն, որով փաստորեն դրվեց Արցախի հիմնահարցը բանակցությունների միջոցով լուծելու գործընթացի սկիզբը: Իրադարձությունների զարգացմամբ պայմանավորված՝ ղարաբաղյան թեման մամուլում առաջնային դարձավ, թեև ներքաղաքական կյանքն ու Հայաստան-Սփյուռք կապերը ևս չէին շրջանցվում, կտրուկ ավելացավ լուրերի և թղթակցությունների քանակը, նաև նկատվեց ժանրային բազմազանություն: Նախկինի նման քիչ չէին նաև Հայաստանին ու Արցախին վերաբերող արտատպումները: Թերթերի էջերում առաջին անգամ հայտնվեցին մեծադիր գովազդներ ու հայտարարություններ:

ԼՂՀ հռչակումից հետո սեպտեմբերի 21-ին ՀՀ-ում անցկացվեց հանրաքվե, որի հիման վրա սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Հաջորդ օրը Գերագույն խորհուրդը դիմում հղեց ՀՀ քաղաքացիներին և աշխարհասփյուռ հայությանը՝ նշելով, որ «վերադարձը դեպի ինքնուրույնություն հեշտ չի լինելու, և ազատության ճանապարհին սպասվում են նոր փորձություններ»[32]: Դեռ 1991 թ. օգոստոսի 24-ից էին դադարել ինքնաթիռային թռիչքները Ստեփանակերտ: Օր օրի ավելանում էին սպանությունների ու մարդկանց պատանդ վերցնելու դեպքերը: Ստեփանակերտում հոկտեմբերին քննարկվեց ԼՂՀ պաշտպանության խորհուրդ և զինված ուժեր ստեղծելու հարցը: Լեռնային Ղարաբաղի, հատկապես Ստեփանակերտի շուրջ գտնվող ադրբեջանական բնակավայրերը, մանավանդ Շուշին, վերածվել էին ռազմական հենակետերի: Ստեփանակերտն ու մոտակա հայկական գյուղերը 1991թ. սեպտեմբերից սկսած անընդհատ կրակի տակ էին:

ԼՂՀ իշխանությունները երկրամասի պաշտպանությունը կազմակերպելուց և բնակչության անվտանգությունն ապահովելուց բացի ունեին մեկ այլ կարևոր խնդիր՝ արագացնել հանրապետության կայացման գործընթացը: Այդ առումով կարևոր նշանակություն ունեցավ 1991թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցած ԼՂՀ ժողովրդական պատգամավորների Գործադիր խորհրդի նստաշրջանը, որը որոշում ընդունեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1990թ. ապրիլի 3-ի որոշման հիման վրա Լեռնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու մասին: Այն նշանակվեց դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների պաշտպանության օրը, Ադրբեջանում անցկացվելիք համանման հանրաքվեից մեկ շաբաթ շուտ: Այդ օրը արցախահայությունը համաժողովրդական քվեով հաստատեց 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակված ԼՂՀ անկախությունը: Աշխարհի տարբեր երկրներից ժամանած 40 անկախ դիտորդները ոչ մի խախտում չհայտնաբերեցին հանրաքվեի անցկացման ընթացքում, ավելին՝ նրանք արձանագրեցին, որ ադրբեջանական կողմը «վարում է զավթողական պատերազմ՝ ազատության և ժողովրդավարության համար մարտնչող Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ»[33]: Փաստորեն, ԽՄ փլուզումից մի քանի օր առաջ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցավ հանրաքվե, որից հետո զինված հակամարտությունը նոր փուլ թևակոխեց:

Դեկտեմբերի 8-ից 11-ը Բելառուսի Բելովեժյան թավուտում Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի առաջնորդների նախաձեռնությամբ սկսվեց Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) կազմավորումը: Մեկ օր անց Ռուսաստանի խորհրդարանն ընդունեց 1922 թ. դեկտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմավորման պայմանագիրն ուժը կորց-

րած լինելու որոշում…[34], մամուլը տեղեկացրեց նաև Գորբաչովի հրաժարականի մասին[35]: ԼՂՀ Գործադիր խորհրդի՝ դեկտեմբերի 19-ին տեղի ունեցած նիստի որոշմամբ դիմեցին Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ա.Մութալիբովին և ժողովրդին, որով ԼՂՀ-ն պատրաստակամություն էր հայտնում հավասար իրավունքներով և պարտականություններով բանակցություններ սկսել Ադրբեջանի Հանրապետության հետ և պարտավորվում էր միջազգային նորմերին համապատասխան իր տարածքում հարգել ազգային փոքրամասնությունների շահերն ու իրավունքները[36]: Հանրաքվեից հետո արցախցիների հիմնական խնդիրը դարձավ Գերագույն խորհրդի ձևավորումը: Դեկտեմբերի 28-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրություններն անցան Ադրբեջանի պարտադրած պատերազմական գործողությունների պայմաններում: Միայն այդ օրը արցախցիները տվեցին 18 զոհ, տասնյակ վիրավորներ, գնդակոծվեց ավելի քան 40 բնակավայր, ավերվեցին Ստեփանակերտի մարզային ու մանկական հիվանդանոցները և բազմաթիվ այլ շինություններ: Մամուլը ցավով արձանագրեց, որ «Լավագույն տղերքը հեռանում են»[37] և թերթի մի էջում լուսաբանեց ՀՀ նախագահի թեկնածուների քարոզարշավը, մյուսում՝ ԼՂ-ում տիրող պատերազմական իրավիճակը, նաև առաջին հաղթանակները. «Տողն ազատագրվեց»[38] (Ըստ էության՝ ԼՂՀ կանոնավոր բանակի առաջին զորամիավորման կորիզը հանդիսացավ հենց Տողի ջոկատը):

Փաստորեն, ավարտվեց ևս մեկ տարի, փլուզվեց խորհրդային իշխանությունը, բայց Ղարաբաղի հիմնախնդիրը չլուծվեց: Միայն 1988թ. փետրվարից մինչև 1990 թվականի վերջը Արցախի խնդրի առնչությամբ ընդունվեց 7 միութենական որոշում (չհաշված այն բազմաթիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի պետական իշխանության ու կառավարման մարմինների կողմից):

Այդ ծանր ժամանակաշրջանում մասնագիտական մարտահրավերների առաջ էր կանգնած նաև հայաստանյան մամուլը: Տեղեկատվական միջավայրը լուրջ խնդիրներ ուներ թե՛ բովանդակային, թե՛ տեխնիկական առումներով, որոնց լուծմամբ էին պայմանավորված տեղեկատվության տարածման հնարավորությունները: Կիսատ տեղեկատվություն հաղորդող, հաճախ նաև լռություն պահպանող մամուլը սկզբնական շրջանում հիասթափեցնող գործունեություն էր իրականացնում: Վստահության ճգնաժամի մթնոլորտում մամուլը չէր իրականացնում իրեն վերապահված գործառույթները:

Արցախյան հուժկու շարժումն անակնկալի բերեց Հայաստանի գիտական, գաղափարախոսական և լրատվական համակարգի հաստատություններին: Այդ կենտրոնները կարծես պատրաստ չէին և ոչ էլ կարողություն ու հաճախ նաև մտադրություն ունեին հակազդելու ու խափանելու հակառակորդի սանձազերծած լրատվական ագրեսիան, ճեղքելու խարդավանքները երեսպատող տեղեկատվական շրջափակումները: Խորհրդային Միության վերջին տարիներին ամբողջական և հավաստի տեղեկատվության պակասը, ոչ հազվադեպ դրսևորվող միակողմանիությունն ու կանխակալությունը հաղթահարելու նպատակով խոսվում էր լրատվական շրջափակման ճեղքման մասին ավելի հաճախ հենց մամուլի կողմից: Բայց հայաստանյան մամուլը սկսեց ակտիվորեն անդրադառնալ ղարաբաղյան շարժմանն ու դրա զարգացումներին 1991-ի գարնանը, երբ ակնհայտ էր, որ փլուզվում է Խորհրդային Միությունը: Թե՛ հայկական, թե՛ ռուսական մամուլը որակական փոփոխություն կրեցին. մինչ այդ կոմունիստական թերթերը ղարաբաղյան շարժման մասին կա՛մ գրում էին բացասական լույսի ներքո, կա՛մ ոչինչ չէին գրում. անկախ մամուլ գոյություն չուներ: Թեև հարկ է նկատել, որ խորհրդային ապատեղեկատվության կազմակերպած արշավը դրական կողմ ունեցավ. այն ավելի հրատապ ու անհրաժեշտ դարձրեց ազատ մամուլի նոր անունների ծնունդը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ավանգարդ», 16 օգոստոսի, 1989թ., Երևան:
2. «Խորհրդային Հայաստան», 25 հունիսի, 1989թ., Երևան:
3. «Ավանգարդ», 9 հուլիսի, 1989թ., Երևան:
4. «Խորհրդային Հայաստան», 23 հուլիսի, 1989թ., Երևան:
5. Նույն տեղում, 26 հուլիսի, 1989թ., Երևան:
6. Նույն տեղում, 29 հուլիսի, 1989թ., Երևան:
7. «Ավանգարդ», 20 օգոստոսի, 1989թ., Երևան:
8. «Երեկոյան Երևան», 8 սեպտեմբերի, 1989թ., Երևան:
9. Նույն տեղում, 13 սեպտեմբերի, 1989թ., Երևան:
10. Նույն տեղում, 19 սեպտեմբերի, 1989թ., Երևան:
11. Նույն տեղում, 22 սեպտեմբերի, 1989թ., Երևան:
12. «Խորհրդային Հայաստան», 22 սեպտեմբերի, 1989թ., Երևան:
13. Նույն տեղում, 3 դեկտեմբերի, 1989 թ., Երևան:
14. «Երեկոյան Երևան», 4 դեկտեմբերի, 1989թ., Երևան:
15. Նույն տեղում, 30 դեկտեմբերի, 1989թ., Երևան:
16. «Ավանգարդ», 29 դեկտեմբերի, 1989թ., Երևան:
17. Նույն տեղում, 31 դեկտեմբերի, 1989թ., Երևան:
18. «Խորհրդային Հայաստան», 4 փետրվարի, 1990թ., Երևան:
19. Նույն տեղում, 4 փետրվարի, 1990թ., Երևան:
20. Նույն տեղում:

    * Թեև օրաթերթերում վերլուծական ժանրերին մեծ տեղ չի հատկացվում, լավագույն դեպքում առանձին այունակագրեր են դրանով զբաղվում, քանի որ այդ ժանրերով նյութեր պատրաստելը մեծ փորձառություն և լրագրողական հմտություններ է պահանջում, սակայն վերլուծական ժանրերում, որպես կանոն, սուբյեկտիվ գործոնն ավելի ընդգված է, և շատ բան կարող է որոշել ոչ միայն թերթի, այլև տվյալ լրագրողի քաղաքական կողմնորոշումը:
21. «Խորհրդային Հայաստան», 6 ապրիլի, 1990թ., Երևան:
22. Նույն տեղում, 1 ապրիլի, 1990թ., Երևան:
23. «Հայաստանի Հանրապետություն», 26 հունիսի, 1991թ., Երևան:
24. «Ոգնի», 9 մայիսի, 1990թ., Երևան:
25. Նույն տեղում, 10 մայիսի, 1990թ., Երևան:
26. «Խորհրդային Հայաստան», 3 օգոստոսի, 1990թ., Երևան:
27. «Ազատամարտ», օգոստոս, թիվ 22, 1991թ., Երևան:
28. «Ավանգարդ», 5 սեպտեմբերի, 1991թ., Երևան:
29. «Ազգ», սեպտեմբերի 4, 1991թ., Երևան:
30. «Бакинский рабочий», 4.09.1991.
31. «Հայաստանի Հանրապետություն», 10 սեպտեմբերի, 1991թ., Երևան:
32. Նույն տեղում, 25 սեպտեմբերի, 1991թ., Երևան:
33. Նույն տեղում, 14 դեկտեմբերի, Երևան, 1991թ.:
34. Նույն տեղում, 13 դեկտեմբերի, 1991թ., Երևան
35. «Ազատամարտ», 26-31 դեկտեմբեր, թիվ 43, 1991թ., Երևան:
36. «Երկիր», 21 դեկտեմբերի, Երևան, 1991թ.:
37. Նույն տեղում, 1 հոկտեմբերի, 1991թ., Երևան:
38. Նույն տեղում, 1 նոյեմբերի, 1991թ., Երևան:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Իրավական պայքարի առանձնահատկությունները և դրա դրսևորումները խորհրդահայ մամուլում՝ ղարաբաղյան շարժման համատեքստում (1988-1991թթ.)

Աննա Մկրտիչյան

1988-1991 թթ., հասարակական-քաղաքական կյանքում արձանագրվող տեղաշարժերով պայմանավորված, լրատվական դաշտի ընդհանուր պատկերը շեշտակիորեն փոխվեց: Այդ շրջանի հայաստանյան մամուլը հասկանալիորեն ուղղված էր Ղարաբաղյան շարժմանը. ցանկացած ոլորտի առնչվող հրապարակում տարբեր թելերով կապվում էր Ղարաբաղին՝ սկսած Ղարաբաղի խնդիրը վերակառուցման քողի ներքո և հրապարակայնության ոգով ներկայացնելուց մինչև «ազգայինի» վերաիմաստավորում, և, իհարկե, իրավական պայքար, որն արտահայտվում էր հանրաքվեի և ընտրությունների անցկացմամբ, անկախության ճանապարհի հարթեցմամբ, Ղարաբաղի կայացման գործընթացի իրականացմամբ և այլն: Ղարաբաղյան շարժման մեկնարկին հաջորդող իրադարձությունները պահանջատեր հայության համար պայքարի նոր ուղղություններ էին ուրվագծում:

РЕЗЮМЕ

Особенности правовой борьбы и ее выражения в советско-армянской прессе в контексте карабахского движения (1988-1991)

Анна Мкртичян

Ключевые слова: пресса Армении, прававая борьба, Карабахское движение, армяно-азербайджанский конфилкт, информация.

В 1988-1991 гг. общая картина медии резко изменилась из-за сдвигов в общественной и политической жизни. Армянская пресса того периода была явно нацелена на карабахское движение. Пресса данной времени связана с Карабахом: начиная с представления вопроса Карабаха в духе перестойки и гластности, переосмысления «национального», и, конечно, правовой борьбы, которая выражалась путем проведения референдума и выборов, Формировании пути независимости, реализации процесса создания карабаха и так далее. События, которые последовали за началом карабахского движения, наметили новые направления борьбы для армян.

SUMMARY

The Peculiarities of Legal Struggle and its Expressions in the Soviet Armenian Press in the Context of the Karabakh Movement (1988-1991)

Anna Mkrtichyan

Keywords: Armenian's press, legal struggle, Karabakh movement, conflict between Armenia and Azerbaijan, information.

The overall picture of the media field has changed radically due to the shifts in public and political life in 1988-1991. The Armenian press of that period was aimed at the Karabakh movement: any article related to different spheres connected to Karabakh, starting with presenting the Karabakh problem under the veil of reconstruction and in the spirit of publicity and rethinking “the national”, and of course the legal struggle that was expressed through the referendum and elections, paving the way for independence, implementation of the Karabakh peace process, and so on. The events that followed the start of the Karabakh movement outlined new directions for the demanding Armenians.